

ուժերը. երևութապէս ճիշդ է այդ, բայց ծննդաբերութենէն յետոյ, է որ երգիքը կը վառի: Ուստի բժիշկը պէտք է լաւ կշռէ, չափէ և թելադրէ: Եւ ընտանիքները պէտք է անսպախան մտիկ ընեն իրենց բժիշկին, երբ ան կ'ուզէ յետաձգել աղջկան ամուսնութիւնը:

Եզրակացութիւն:— Թիւպէրքիւլոզը, սահմանափակուած ըլլալ թէ տարածուած, երբ զարգացման մէջ է, արդեւք մըն է ամուսնութեան, մինչև հաստատ զլարմանովը: Սահմանափակուած թիւպէրքիւլոզի դարմանումէն յետոյ, ամուսնութիւնը երբեք վտանգ չի ներկայացներ:

Ամէնէն աւելի թոքային թիւպէրքիւլոզն է, որ կը պահանջէ մեծ զգուշութիւն: Բժիշկը ստիպուած է քննել «Հոդը», և հաստատել թէ բոյնը գոցուած է, կամ երբեք չէ՞ բացուած: Երիտասարդ բաղձաթիւ ալրեր կան, որոնք հիւժախտաւոր ըլլալով հանդերձ դարմանուած են, ամուսնացած և առողջ դաւակններու տէր դարձած: Երիտասարդ աղջիկներու համար պարագան նոյնը չէ: Սաոյգ դարմանումը միայն կը փրկէ զանոնք յղութեան ժամանակի վտանգներէն:

ՓՐՈՖ. ՄՕՐԻՍ ԼԸԹԻԻԼ

ԹԻԻԻՄԱՑՈՒԹԵԼՆՑ ԴԵՄ

ԿԱՆԱՆՑ ԶԵՐՄԱՄԻՋՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Երիտասարդ մը— որ իր ջերմամիզութիւնը բուժելու համար լինձ էր դիմած, կ'ապշէր որ վարակուած է: Զարմանքին պատճառը հետեւեալն է:

Սեռային մերձեցումէն առաջ սովորոյթ էր ըրեր մէկ լէմոն քամել կնոջ սեռային գործարանի վրայ: Եթէ կսկծացնէ, կը նշանակէ, որ կինը ջերմամիզութիւնով վարակուած է. այլապէս անվտանգ կարելի է մերձենալ: Պարզե համարեցի հրապարակով տարահամոզել երիտասարդն ու իր համախոհները:

1. Յաճախ կանանց մէջ ջերմամիզութիւնը աննկատ կ'անցնի: Առանց սուր ցաւերու և նշաններու հիւանդը քրոնիկ աստիճանին միայն գիտակ կը դառնայ իր վարակումին:

2. Սուր ջերմամիզութեան դէպքում, երբ արտաքին գործարանները ևս վարակուած են, ամբողջ սեռային գործարանը կը լինի ուռած, բորբոքած, կարմրած, դեղձերն ու ծակտիկները փքած: Այս վիճակին մէջ առանց լէմոնի, սոսկ աչքով կարելի է տեսնել ամբողջ գործարանին տեսքը, ողողուած թանձր թարախով:

3. Քրոնիկ ջերմամիզութիւնը դժուար է ճանաչելը: Բորբոքումը և թարախահոսումը սովորաբար սահմանափակուած կը լինի

արգանդին և անոր կից ներքին գործարաններուն և սեռային արտա-
քին գործարանները և իզափողը՝ զերծ բորբոքումէ։

4. Կանանց միզանցքը՝ տղամարդկանցին նման անմիջական
վարակման ենթակայ չէ, որովհետեւ սեռային մերձեցումի մէջ ուղ-
ղակի և գործօն մասնակցութիւն չունի։ Հետեւաբար միզանցքը կա-
յող է վարակումէն խուսափիլ։

Գանձ լէմոնին։

Լէմոնի ջուրը կսկծացնող է, որովհետեւ թթու է։ Թթուութիւնն
է, որ բորբոքումը կ'աւելցնէ և ցաւ կը տայ։ Նոյնպէս քացախն ու
ալբօլը։ Զէ՞ն, որ բժիշկները մէզը թթուացնող ուտելիքները կ'ար-
գելեն։

Այժմ, եթէ ընդունինք, որ կանանց քրոնիկ ջերմամիզութեան
մէջ արտաքին գործարանները ու միզանցքը զերծ են բորբոքումէ,
ապա ուրեմն լէմոնի ջուրը չպիտի կսկծացնէ, որովհետեւ անբորբոք
մորթին կամ գործարանին վրայ աղդեցութիւն չունի, իսկ ներս,
դէպի բորբոքուն գործարանները մտնել չի կրնար։

Ենթադրենք, սակայն, որ կսկծացուց։ Այդ ևս ապացոյց չէ,
որ կինը անպայման վարակիչ հիւանդութիւնը ունի։ Լէմոնի ջուրը
կը կսկծացնէ միւկոսին կերպով և պատճառով հասարակ սկիթուք
մը, վէրք մը և կամ մորթի ճեղք մը։

Եթէ ակտաճանաչման այս միջոցը կիրարկուէր, ո՛րքան «մե-
ղաւոր» կիներ անմեղ պիտի դառնային, և անմեղները՝ մեղաւոր
պիտի դատուէին։

Անփոփում և եզրակացութիւն.

1. Ջերմամիզութիւնը, կօնօքօքի մանրէի առթած բորբոքումն
է, որ ընդհանրապէս սեռային մերձեցումով յառաջ կու գայ։

2. Մինչ տղամարդկանց մէջ միզանցքային բորբոքում մըն է,
կանանց մէջ արգանդային բորբոքում է, իսկ միզանցքի վարակումը
պատահական։

3. Մինչ ջերմամիզութեան դարմանումի մէջ դեղ խմելը տղա-
մարդկանց բուժումին համար կրնայ օգտակար ըլլալ, կանանց հա-
մար երբեք օգուտ չունի (եթէ միզանցքը զերծ է)։

4. Մինչ տղամարդկանց համար սուր ջերմամիզութիւնն է
տանջալի, կանանց համար քրոնիկն է, որ լեցուն է տանջանքով, ցա-
ւով, խիթերով և այլադան հետեւանքներով։

ԲԺ. ԵՐ. ԽԱԹԱՆՍԱՍԵԱՆ